Հայերեն թարգմանությամբ ներկայացնում ենք նիդեռլանդացի անվանի լեզվաբան, մեր հանդեսի խմբագրական խորհրդի անդամ Ֆ. Կորտլանդտի երկու հոդվածը, որոնցում քննարկվում է նորագույն համեմատաբանության տեսության մեջ բեկումնային նշանակություն ունեցած ձայնածերպայինների հարցը՝ հիմնված առաջին հերթին հայերենի հնագույն (արխաիկ), հատկապես վերջինիս որոշ բարբառներում առկա տվյալների վրա:

Այն կարող է իրական նշանակություն ունենալ հայերենի ընդհանուր պատմության բնագավառում նոր և տեսականորեն հիմնավորված ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու համար: (Գլխ. խմբագիր)[1]:

Ֆրեդերիկ Կորտլանդտ
(Նիդեռլանդներ, Լեյդենի համալսարան)

[Հոդված 1]

ՀԱՅԵՐԵՆ ՁԱՅՆԱԾԵՐՊԱՅՆԱՑՈՒՄԸ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ Է[2]

Անջեյ Պիսովիչը վերջին շրջանում (1997 թ.) մեկնաբանել է իմ՝ հայերենի բաղաձայնական երկրորդ տեղաշարժի մասին տեսակետը (1978 թ.): Քանի որ նա ակնհայտորեն սխալ է ըմբռնել իմ փաստարկները, ես այստեղ կփորձեմ պարզաբանել խնդիրը:

Ա. Պիսովիչը համաձայն է իմ այն տեսակետին, որ, այսպես կոչված, շնչեղ ձայնեղները, օրինակ.՝ *դ*'-ն, պարզ ձայնեղների, ինչպես օրինակ, Կենտրոնական Հայաստանի բարբառների *դ*-ն, երկրորդական զարգացման արդյունք են: Ավելի ուշ դրանք հակված էին կորցնել ձայնեղությունը իրենց տևողության սկզբնական շրջանում և շնչեղությունը փոխել շնչեղ ձայնի (շշունչ) հաջորդ ձայնավորում, որը ստանում է ցածր տոնայնություն[3]: Ես պետք է գրեմ

---

[1] Տալիս ենք որոշ տերմինների հայերեն համարժեքներ՝ glottal - *ձայնածերպային* (< glossa, այստեղ *ձայնածերպ*), glottalized- *ձայնածերպայնացված*, murmured - *շշնջյունային* (< murmure – *շշունջ*, այստեղ *շշնջյուն*):

[2] *F. Kortlandt*, Armenian Glottalization Revisited // *"Annual of Armenian Linguisics"*, 1998, 19, էջ 11-14:

[3] *W. S. Allen*, Notes on the Phonetics of an Eastern Armenian Speaker // *"Transactions of the Philological Society"*, 1950, էջ 200 (180-206):

այս [H] շնչեղ ձայնի (կամ շնչեղ ձայնեղի) մասին, ի տարբերություն [h]-*ի*, որը խուլ շունչ է, օրինակ՝ *տ'* = *[թ]* շնչեղ խուլի դեպքում:

Այսպիսով, մենք գործ ունենք *դ* > *դ'* = *[դh]* > *[տh]* զարգացման հետ, որը տարբեր է [*տh*]-ից Կենտրոնական Հայաստանի բարբառներում՝ Երևանից մինչև Սեբաստիա: Այս զարգացումն ունի իր կատարյալ զուգահեռը Փենջաբիում, որտեղ հնդկական շնչեղ ձայնեղը դարձել է պարզ խուլ, որին զումարվում է հաջորդ ձայնավորի ցածր տոնայնություն, օրինակի համար՝ *ghoRā* > *kȯRā* «ձի»[4]: Այստեղից կարող ենք եզրահանգել, որ շնչեղ ձայնեղների և խուլերի միախառնումը երկու տարբեր փուլերով է ընթանում. առաջինը բաղաձայնի սկզբնական մասի ձայնազրկումն է (ինչպես Կենտրոնական Հայաստանի բարբառներում է), իսկ երկրորդը հաջորդող ձայնավորի կողմից ձայնի կլանումն է (կամ ձայնազրկումը, որպեսզի խառնվի խուլ շնչեղի հետ):

Իմ և Պիսովիչի միջև հիմնական անհամաձայնությունը կապված է արևելյան հայերենի *պ, տ, կ* բաղաձայնների առաջնային կամ երկրորդական ձայնածերպայնացման բնույթի հետ: Պիսովիչը կարծում է, որ ձայնածերպայնացված հնչյունները «ավելի շատ երկրորդական են, քանի որ հին հայերենում նրանց հաճախականությունը քիչ էր», և որ դա «առանձնացնում է նրանց՝ որպես գոյություն ունեցող հակադրության չնշույթավորված անդամ»[5]:

Այս փաստարկն ամբողջապես անհասկանալի է ինձ համար: Եթե հատկանիշը հազվադեպ հանդիպող է, ապա ինչո՞ւ այն պետք է երկրորդական լինի: Ընդհակառակը, ես ավելի կնախընտրեի այն համարել հազվագյուտ հնաբանություն: Արդյո՞ք ոչ հաճախակի հանդիպող հատկանիշը բնորոշ է գոյություն ունեցող հակադրության չնշույթավորված անդամներին: Ավելի շուտ ես կպնդեի հակառակը: Պիսովիչը ձայնածերպայնացված բաղաձայնների առկայությունը Համշենի և Զեյթունի այն բառերում, որոնք սկզբնապես ունեցել են *բ, դ, գ* բաղաձայններ, ներկայացնում է որպես փաստարկ հօգուտ «հայերենի բոլոր ձայնածերպայնացված բաղաձայնները որպես երկրորդական դիտելուն» (նույն տեղում):

Սա անկասկած անիմաստ է, և Պիսովիչն էլ այդ շատ լավ

---

[4] Հմմտ. *F. Kortlandt*, Proto-Indo-European Glottalic Stops: The Comparative Evidence //"*Folia linguistica Historica*",1985, 6, էջ 193 (183-201):

[5] *A. Pisowicz*, Consonant Shifts in Armenian Dialects during the Post-Classical Period Revisted // "*Armenian Perspectives*". 1997, էջ 217 (251-230):

գիտեր, քանի որ ձայնեղ բաղաձայնների առկայությունն արևմտահայերենի՝ սկզբնապես *պ, տ, կ* բաղաձայններ ունեցող բառերում նա չէր համարում որպես փաստարկ՝ հօգուտ հայերենի բոլոր ձայնեղ բաղաձայնների երկրորդական դիտելուն: Իրականում խնդիրն այն է, թե արդյո՞ք հայերենի ձայնածերպայնացումն առաջացել է Պիսովիչի «արևելյան զարգացման առաջին փուլում»[6], թե՞ արդեն կար նախահայերենում, ինչպես ես եմ պնդում:

Ամենակարևոր խնդիրը հարավային բարբառների զարգացումն է, որտեղ *պ, տ, կ* և *բ, դ, գ* բաղաձայնները փոխվել են տեղերով: Ըստ Պիսովիչի հաշվարկների՝ մենք պետք է հետևենք իրադարձությունների հետևյալ զարգացմանը.

Ա[ռևմտ.] 1. Ձայնեղ *բ* > շշնջյունային *[պh]*.

Ա[ռևմտ.] 2. Խուլ *պ* > ուժեղ (fortis) *պ* > ձայնեղ *բ*.

Ա[ռևմտ.] 3. Հագագային/շշնջյունային *[պh]* > խուլ *[պ]*.

Ե՛վ *պ*-ն, և՛ *բ*-ն մնում են տարբեր շնչեղ խուլ *պ՝ = պh]*-ից, որտեղ ձայնի վրա հասնելու ժամանակահատվածը հետաձգվում է:

Այս հարցում դժվարությունն այն է, որ անորոշ է մնում, թե ինչպես *պ*-ն և *բ*-ն կարող են փոխվել տեղերով: Եթե մենք ուժեղ *պ*-ն ներկայացնենք որպես *[պբ]*, ապա ձայնային գրոհի ժամանակահատվածի երկարացման *բ > [պh] > պ* և ձայնային գրոհի ժամանակահատվածի կրճատման *պ > [պբ] > բ* միավորումը ակնհայտորեն չի առաջացնում հնչույթային փոփոխություն: Ձայնի պահումը և ազատ արձակումն անշունչ բաղաձայններում ավելի երկար չեն, քան շնչեղ ձայնեղներում, և ոչ մի պատճառ չկա ենթադրելու, որ այն երբևէ եղել է[7]: Այսպիսով, հարց է առաջանում, թե ուժեղացումը և համապատասխան թուլացումը *պ > [պբ] > բ* հերթագայության մեջ ինչ է իրականում նշանակում: Եթե բաղաձայնական երկարությունը դեր չի խաղում, ապա ուժեղացման հատկանիշը պետք է բացատրվի խոչակային/կոկորդային առանձնահատկությամբ, այսինքն՝ ձայնածերպայնացմամբ: Փաստորեն, կոկորդային փակվածության առկայությունը պարզաբանում է, թե ինչու է ձայնի վրա հասնելու ժամանակահատվածը կարճանում *պ > [պբ] > բ* հերթագայության մեջ, մինչ այն երկարում է *բ > [պh] > պ* անցման մեջ:

---

[6] Նույն տեղում, էջ 226:

[7] *A. Khachaturian*, The nature of Voiced Aspirated Stops and Affricates in Armenian Dialects // "*Annual of Armenian Linguisics*", 1983, 4, p. 61 (57-62):

Այժմ հաջորդ հարցը հետևյալն է. ե՞րբ է առաջացել ձայնածերպայնացումը:

Արևելյան հայերենի համար Պիսովիչը կարծում է, որ պարզ խուլ բաղաձայններ *պ, տ, կ*- ն «ձայնածերպայնացումը ձեռք են բերել որպես տարբերակիչ հատկանիշ: Այս գործընթացը կարող է համարվել ուժեղացման շարունակություն» [8]:

Ա[րևել.] 1. Ձայնեղ *բ* > հագագային/շշնջյունային *[պh]*,

Ա[րևել.] 2. Խուլ *պ* > ուժեղ (fortis) *պ* > ձայնածերպայնացված *[պ']*,

Ա[րևել.] 3. Նոր ձայնեղ *բ*-ի առաջացումը փոխառյալ բառերում:

Մուշի բարբառում միջին և վերջին դիրքերի համար Պիսովիչը ավելացնում է.

Ա[րևել.] 4. Ձայնածերպայնացված [պ'] > ձայնեղ *բ*,

Ա[րևել.] 5. Հագագային/շշնջյունային [պh] > խուլ [*փh*]:

Քանի որ Ա[րևել.] 2 գումարած Ա[րևել.] 4 զարգացումը հավասար է Ա[ռևմտ.] 2-ին, ապա շատ ավելի հեշտ է դառնում ճանաչել ուժեղացումը ձայնածերպայնացման առաջացմամբ: Քանի որ ձայնածերպայնացումը կարելի է ենթադրել նաև հարավային բարբառներում, ինչպես արդեն նշվել է վերևում, ապա այն կարելի է վերականգնել նախահայերենում: Սա դուրս է թողնում «ուժեղացումը»՝ որպես վաղ հայերենի զարգացում, և ձայնածերպայնացման առաջացումը կապում նախապատմական ժամանակների հետ:

Վանի բարբառի համար, ներկայացնելով որպես կենտրոնական խմբից ծագած բարբառ, Պիսովիչը ենթադրում է հետևյալ զարգացումը[9].

Ա[րևել.] 6. Հագագային/շշնջյունային *[պh]* > ձայնածերպայնացված *[պ']*

Սա բավականաչափ անբնական զարգացում է, քանի որ ձայնածերպայնացումը և շնչեղ ձայնն ամբողջապես հակառակ խոչակային հատկանիշներ են: Շատ ավելի հավանական է, որ ձայնածերպայնացված *[պ']*-ն առաջացել է պարզ *[պ]*-ից, որն էլ առաջացել է *բ*-ի խլացումից: Ակնհայտ թվում է, թե կա մի սկզբնական

---

[8] *A. Pisowicz*, նշվ աշխ., էջ 225:
[9] *A. Pisowicz*, նշվ աշխ., էջ 229:

պարզ բաժանում այն բարբառների միջև, որոնք ունեն շնչեղ ձայնեղներ և այնպիսիները, որոնցում գործում է Աճառյանի օրենքը, որը նշում է սկզբնական սահմանային գիծը մի կողմից՝ կենտրոնական բարբառների (ներառյալ Արարատյանը), մյուս կողմից՝ Վանի և Ղարաբաղի բարբառների միջև: Վերջին բարբառային ձևի աշխարհագրական բաժանումը, որը նաև հանդիպում է Արարատյան տարածքի առանձին շրջաններում, ենթադրում է, որ շնչեղ ձայնեղների բացակայությունն այստեղ դիտվում է որպես հնաբանություն: Ես, ըստ այսմ, հակված եմ հետևյալ հարաբերական ժամանակագրությանը, որը ես ներկայացրել եմ քսան տարի առաջ[10]:

Հ[այ.] 1. Ձայնեղ *դ > դ' > [տh]* կենտրոնական բարբառներում (Երևանից մինչև Սեբաստիա),

Հ[այ.] 2. *դ > [տ]* խլացում հարավարևելյան բարբառներում (Սասուն, Վան, Ղարաբաղ),

Հ[այ.] 3. Արևմտահայերենի բաղաձայնական տեղաշարժ՝ *տ = [տ'] > դ,*

Հ[այ.] 4. Տեղային զարգացումներ՝ *տ > դ, տ > տ', [տh > [թ]:*

Իմ հաշվարկների հիմնական կետն այն է, որ հարավային բարբառները, օրինակ՝ Սասունը, պետք է ծագած լինեն հարավարևելյան տիպից (Վան), ոչ թե կենտրոնական բարբառներից:

[Հոդված 2]

ՆԱԽԱՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՁԱՅՆԱԾԵՐՊԱՅԻՆ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ: ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ[11]

Մեկ այլ տեղ ես պնդում եմ, որ հնդեվրոպական նախալեզվի ոչ շնչեղացած ձայնեղ բաղաձայններն իրականում եղել են փափուկ ձայնաձերպայնացած[12]: Մարտին Կումելը մերժում է իմ պնդումը իր հնդեվրոպական բաղաձայնական տեղաշարժերի համեմատա-

---

[10] *F. Kortlandt*, նշվ աշխ., 1978,էջ 13:

[11] *F. Kortlandt*, The Evidence revisited Proto-Indo-European glottalic stops: The evidence revisited (World Wide Web [pdf], 2012). http://www.kortlandt.nl/publications/art282e.pdf

[12] Օրինակ՝ *F. Kortlandt*, Studies in Germanic, Indo-Eoropean and Indo-Uralic, Amsterdam: Rodopi, 2010, էջ 53-65 և հջ.:

կան ուսումնասիրության մեջ[13]: Այսպիսով, տեղին կլինի մասնավորել մեր անհամաձայնության հիմքերը:

Իմ վերականգնումը հիմնված է հնդիրանական, հայերեն, բալթյան և գերմաներեն նյութի ուղղակի ապացույցների և հնդիրանական, հունարեն, լատիներեն և սլավոնական նյութի անուղղակի ապացույցների վրա: Կումելը մերժում է հնդիրանական, հայերեն, լատիներեն, գերմաներեն և բալթյան նյութի ապացույցները և անուշադրության է մատնում հունարեն և սլավոնական ապացույցները[14]: Հետևելով ավանդական տեսակետին՝ Կումելը վերականգնում է հինգ խուլ, հինգ ձայնեղ և հինգ շնչեղ ձայնեղ բաղաձայններ[15], հաշվի չառնելով այն հանգամանքը, որ երրորդ խումբը չենք կարող գտնել հնդկականից դուրս, և այսպիսով նրանք ազատ կարող են առաջացած լինել ենթաշերտ լեզվի ազդեցության տակ: Քանի որ բոլոր մյուս լեզուները, բացի հունարենից, որն ունի խուլ շնչեղներ, և իտալերենից, որն ունի շփականներ, նշում են պարզ ձայնեղ բաղաձայնները, բնական կլինի վերականգնել պարզ ձայնեղ բաղաձայնները շնչեղ ձայնեղների փոխարեն, հատկապես այն պատճառով, որ սրանք հանդիպում են նաև առանձնացած լեզուներին ամենամոտ ցեղակից լեզուներում (իմա՛ իրանական, փռյուգերեն և կելտական՝ համապատասխանաբար): Ավանդական մեթոդի պնդման պատճառն ակնհայտորեն այն փաստն է, որ սանսկրիտը, հունարենը և լատիներենը պատկանում են առանձնացած լեզուներին, և գիտնականները դժվարանում են հեռանալ այն լեզուներից, որտեղ նրանց վերականգնումները սկզբնապես հիմնված են[16]: Շնչեղ ձայնեղների՝ որպես ձայնեղ բաղաձայններ վերաիմաստավորելու գլխավոր խոչընդոտը, անկասկած, այն ենթադրությունն է, որ ավանդական ձայնեղ բաղաձայնները իսկապես եղել են պարզ ձայնեղ բաղաձայններ: Թողնելով այս ենթադրությունը՝ հնարավոր է դառնում բացատրել հնդիրանականում, հայերենում, սլավոնականում, բալթյան լեզուներում, գերմաներենում, լատիներենում և հունարենում մի շարք երևույթներ: Պատճառը, թե ինչու

---

[13] *M. J. Kümmel*, Konsonantenwandel (Wiesbaden: Reichert Verlag), 2007, հատկապես էջ 303-309:

[14] Հմմտ. *F. Kortlandt*, Studies in Germanic, Indo-Eoropean and Indo-Uralic, էջ 105-109: Եվ հատկապես *Նույնի*, Baltica & Balto-Slavica, Amsterdame: Rodopi, 2009, էջ 51-109:

[15] *M. J. Kümmel*, Konsonantenwandel, Wiesbaden: Reichert Verlag, 2007, էջ 428:

[16] *M. Mayrhofer*, Sanskrit und die Sprachen Alteuropas: "Zwei Jahrhunderte des Widerspiels von Entdeckungen und Irrtümern", Göttingen: Vandenhoeck & Ruprecht, 1983:

ավելի վաղ շրջանի գիտնականներն այս հնարավոր տարբերակը հաշվի չեն առել, այն է, որ ձայնածերպայնացումը, մինչև ժամանակակից բարբառագիտության զարգացումը, եղել է գրի չառնված հատկանիշ[17]:

Ալեքսանդր Լուբոտսկին առաջարկել է, որ հնդիրանականում կոկորդայինը (laryngeal = խոչակայինը) անհետացել է ձայնածերպային փակվածքից առաջ, երբ վերջինիս հաջորդել է մեկ այլ բաղաձայն, օրինակ՝ վեդայական *pajrá-* «ամուր», *pakṣá-* «թև», *pakṣín-* «թռչուն», *pákṣas-* «կողմ» ի հակադրություն *pāpaje* «ամրացած», *pājas* «շրջանակ», pājasyà «լանջ, կողք» ձևերի: Այս զարգացումը դառնում է հասկանալի, եթե խոչակային զումարած ձայնածերպային **-Hg-* հաջորդումը ընկալվում է որպես ձայնածերպային զումարած նախաձայնածերպային ձայնեղ փակվածք *[?'g]* : Չնայած Լուբոտսկին ներկայացնում է խոչակային և ձայնածերպային բաղաձայնների տասնչորս արմատներ հին հնդկերենում կարճ արմատական ձայնեղությամբ, որոնցից հինգը ունեն համապատասխանություններ ավեստայի կարճ արմատի ձայնավորի հետ, միևնույն է, Կումելը չի համոզվում:

Ես պնդում եմ, որ Սինդհիի նախաձայնածերպային ձայնեղ բաղաձայնները հնաբանություն են[18]: Այս լեզվում *d* և *dh* խմբի անվերապահ արտացոլումը խոչակային և շնչեղ է՝ համապատասխանաբար, մինչդեռ *dh* շարքի տարնմանությունը վերջերս առաջացած շնչեղներից առաջ գոյացնում է պարզ ձայնեղների խումբը, օրինակ՝ *'gāhᵘ* «խայծ» < *grāsa-*, ի հակադրություն՝ *gāhᵘ* «կեր» < *ghāsa-:* Ձայնածերպային արտասանությունը չի կարելի վերագրել ներքին ազդեցության, քանի որ շրջակա և ոչ մի լեզվում չենք կարող գտնել ինչ-որ համեմատելի բան: Կումելը առարկում է, որ ավելի հին հնդիրանական շնչեղներից առաջ շնչեղների տարնմանությունը առաջացրել է Սինդհիի ձայնածերպային բաղաձայնները[19], օրինակ՝ 'badhō «սահման, ցատկել» < baddhá-, 'ḍahī «կաթնաշոռ» < dádhi: Այս առարկությունը սխալ է, քանի որ այն միայն ցույց է տալիս, որ խուլ ձայնեղ բաղաձայնները ձայնածերպային էին տարնմանության շրջանում: Նրա այն կարծիքը, որ ձայնածերպայ-

---

[17] *F. Kortlandt,* Studies in Germanic, Indo-Eoropean and Indo-Uralic, էջ 12-18:
[18] *F. Kortlandt,* Studies in Germanic, Indo-Eoropean and Indo-Uralic, էջ 121-124:
[19] *M. J. Kümmel,* նշվ. աշխ., էջ 189:

նացումը առաջացել է նախաձայնային դիրքում և կրկնապատկումից[20], սխալ է, քանի որ ես տեսնում եմ միջձայնավորական –j- < -yy- հակադրություն և սկզբնական 'j-ի տարնմանում j-ին հաջորդող *-H- [?]-ից առաջ[21]:

Փենջաբիի նյութը նույնպես պահանջում է նախաձայնածերպայնացած ձայնեղ փակվածքների գոյությունը ավելի վաղ շրջանում: Այս լեզվում շնչեղ ձայնեղները դարձել են ոչ շնչեղ խուլեր, ցածր տոնը թողնելով հաջորդ ձայնավորին, օր.՝ kòṛā «ձի», հինդի ghoṛā: Քանի որ շնչեղ խուլերը պահպանվել են որպես առանձին կարգ, պարզվում է, որ *dh* շարքը հնչյութապես շնչեղ չի եղել ձայնազրկման ժամանակ, մինչդեռ ձայնածերպային բաղաձայնները պահպանվել են այդ շրջանում[22]: Ավելին, *d* շարքը հաջորդ ձայնավորի տոնը չի ցածրացնում: Սա մատնանշում է նաև ձայնածերպային հատկանիշի պահպանումը: Նշենք, որ Քաշմիրիում և Նուրիստանում չկան շնչեղ ձայնեղներ[23], որը կարելի է համարել հնաբանություններ այդ լեզուներում:

Հայերենի բարբառների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ ձայնածերպայնացումը հին է համեմատած հ.-ե. ոչ շնչեղ ձայնեղների հետ[24]: Կումելը հայերենի հյուսիսային բարբառների ձայնածերպայնացած փակվածքները կապում է կովկասյան հիմքլեզվի ազդեցության հետ՝ առանց հաշվի առնելու համապատասխան հատկանիշի աշխարհագրական տեղաբաշխումը: Քանի որ հայերենի հարավային բարբառները կարևոր են նախահայերենի բաղաձայնական համակարգի վերականգման համար, և Կումելը նույնիսկ չի էլ նշել այդ խնդիրը, ես այստեղ չեմ անդրադառնա այդ հարցին: Ուշադրություն դարձրեք, որ ձայնածերպային արտասանության տարբերակիչ հատկանիշը ակնհայտ է շնչեղի գործածությամբ, ոչ թե ձայնածերպայնացած պայթականի, որ կարելի է տեսնել 19-րդ դարի ռուսերեն փոխառյալ բառերի մեջ, օրինակ՝ p'eč' «վառարան» և manet' «փող»[25]:

---

[20] Նույն տեղում:

[21] *F. Kortlandt*, նույն տեղում:

[22] *A.-G. Haudricourt*, Les mutations consonantiques (occlusives) en indo-européen // *"Mélanges linguistiques offert à Émile Benveniste"*, Louvain: Peeters, 1975, էջ 271 (267-272):

[23] *M. J. Kümmel*, Konsonantenwandel, Wiesbaden: Reichert Verlag , 2007, էջ 438:

[24] *F. Kortlandt*, Armeniaca: Comparative notes , Ann Arbor, Caravan Books, 2003, էջ 20-25, 126-128: Նույնի, Studies in Germanic, Indo-Eoropean and Indo-Uralic, էջ 57-61):

[25] *A. Pisowicz*, Le développment du consonantrisme arménien, Wrpclaw, Polska Akademia Mauk, 1976, էջ 18:

Ըստ Լախմանի օրենքի՝ լատիներեն agō, legō ձևերից ācтus «արված», lēctus «հավաքված» բառի արմատի երկար ձայնավորը, ի հակադրություն faciō, vehō ձևերի factus «պատրաստված», vectus «տարած» բառերի արմատի կարճ բաղաձայնների, ծագել է առաջին բայերում հաջորդող ոչ շնչեղ ձայնեղներից, ի հակադրություն վերջինների խուլ կամ ձայնեղ շնչեղ բաղաձայնների: Ֆերդինանդ դը Սոսյուրը պնդում է, որ նման նախահիտալյան ձևերը, ինչպես *agtos-ը պետք է ունենան նույն ծագումը, քանի որ արմատի վերջին փակվածքն արդեն իսկ ձայնազրկված է եղել նախահնդեվրոպական ժամանակներում[26]: Այս պնդումը հիմա մերժվում է այն տեսությամբ, ըստ որի ոչ շնչեղ ձայնեղները իրականում եղել են ձայնածերպայիններ[27]: Լախմանի օրենքի խնդիրները մեծամասամբ լուծվել են Մանիեի[28] և Կոլինջի[29] կողմից, որոնք ցույց են տվել, որ ձևաբանական տարաբնույթ բացատրությունները համոզիչ չեն, և որ այն հնչյունաբանորեն պայմանավորված զարգացում է եղել: Նրանց աշխատանքը ակնհայտորեն ծանոթ չէ Կումելին, որ դեռ հակառակն է պնդում[30]:

Բալթիկ-սլավոնական լեզուներում, հնդեվրոպական ոչ շնչեղ ձայնեղները առանձնացել են և դարձել ձայնածերպայինի և պարզ ձայնեղի հերթագայում: Առաջին մասը միացել է նախահնդեվրոպական կոկորդայինների, իսկ վերջին մասը ենթադրյալ շնչեղ ձայնեղի հետ: Սա Վինտերի օրենքն է[31]: Ստացված ձայնավոր գումարած ձայնածերպային հերթագայումը մնում է տարբեր հնդեվրոպական երկար աստիճանի ձայնավորներից[32]: Ձայնածերպայնացումը պահպանվել է լիտվերենի ժամայտյան բարբառներում՝ շեշտի տակ, և լատվիերենում՝ անշեշտ վանկերում[33]: Սլավոներենում,

---

[26] *F. de Saussure*, Sur un poit de la phonétique des consonnes en indo-européen // "*Mémoires de la Société de Linguistique de Paris*", 1889, 6, էջ 256 (246-257):

[27] *F. Kortlandt*, Italo-Celtic origins and prehistoric development of the Irish language, էջ 87-89, 121-123, 149-151:

[28] *A. Maniet*, La 'Loi de Lachmann' et les antinomies de l'allongement compensatoire. *Hommage à Max Niedermann* (Bruxelles: Latomus), 1956, էջ 230-237:

[29] *N. E. Collinge*, Lachmann's law revisited // *"Folia Linguistica"*, 8, 1975, էջ 223-253:

[30] *M. J. Kümmel*, նշվ. աշխ., էջ 305:

[31] Օրինակ՝ *F. Kortlandt*, Baltica & Balto-Slavica, էջ 65-76:

[32] Նույն տեղում, էջ 51-64:

[33] *R. Derksen*, An introduction to the history of Lithuanian accentuation // *"Studies in Slavic and General Linguistics, 16: Studies in West Slavic and Baltic Linguistics"*, Amsterdam: Rodopi, 1991, էջ 45-84: *Նույնի՝* On the origin of the Latvian tones // *"Linguistica Baltica"*, 4, 1995, էջ 163-168:

ձայնածերպային բաղաձայնը անհետանում է կոմպենսացվող երկարացմամբ շեշտի նախընթեր և նախավերջընթեր դիրքերում և առանց կոմպենսացվող երկարացմամբ առաջին վերջընթեր վանկի շեշտի տակ[34]: Ձայնածերպայնացումը պահպանվել է ռուսերենում լատվիերենից փոխառությունների վաղ շրջանում[35]: Աթաբասկերենում սլավոնական զարգացումների ակնհայտ զուգահեռ կա[36]: Այն ենթադրում է, որ Վինտերի օրենքը չի կարող բացատրվել որպես պարզ երկարացում ձայնեղից առաջ[37]: Ի տարբերություն «կոտրված տոնի» (broken tone) (= ձայնածերպայնացում) արևելյան բալթյան տոնային ուրվագիծը ծագում է շեշտի ներքաշումից[38]:

Գերմաներենում, վարկածը, ըստ որի ոչ շնչեղ ձայնեղները նախաձայնածերպայնացված բաղաձայններ էին, հանգեցնում է նախաձայնածերպայինների ծագմանը դանիերենի արևմտյան բարբառներում (the vestjysk stød), նախաշնչեղացման առաջացմանը իսլանդերենում և Սկանդինավիայի այլ վայրերում, ավելի երիտասարդ *fuþark-ի* ծագմանը, Սկանդինավիայի մեծ մասում ռնգային բաղաձայնների առնմանմանը հաջորդ բաղաձայնի հետ, հյուսիսային և արևմտյան գերմաներենում տարբեր մակարդակների կրկնակիացմանը, գրական անգլերենում նախաձայնածերպայինների առաջացմանը, վերին գերմաներենում կիսաշփականների և կրկնակիացված շփականների առաջացմանը և ֆրանկոնյան տոնային ակցենտների ծագմանը[39]: Կա կոնկրետ զուգահեռ նախաշնչեղացման առաջացման համար նախաձայնածերպայիններից բուրմեսյան *hp* < **?p,* բացի *p* < **b* ձայնազրկումից հետո[40]: Կա ուժեղ հարաբերակցություն նախաձայնածերպայնացման, նախաշնչեղացման, կրկնակիացման և ձայնայինների ձայնազրկման միջև Սկանդինավիայում[41]: Անգլերենի կոկորդային բաղաձայնը տալիս է նույն լսողական տպավորությունը, և թվում է, թե ունի նույն ար-

---

[34] *F. Kortlandt* , Selected wretings on Slavic and general linguistics, Amsterdam: Rodopi, 2011, էջ 157-176, 277-309:

[35] *F. Kortlandt* , Baltica & Balto-Slavica, էջ 46:

[36] *F. Kortlandt*, Selected wretings on Slavic and general linguistics , էջ 413-415:

[37] *M. J. Kümmel,* Konsonantenwandel, 2007, էջ 307:

[38] *R Derksen, նշվ. աշխ.:*

[39] F. *Kortla*ndt, Studies in Germanic, էջ 165-199, 249-257, 293-318:

[40] *D. Bradley,* Proto-Loloish, London, Curzon Press, 1979, էջ 130:

[41] *G. Ó. Hansson,* Remains of a submerged continent: Preaspiration in the languages of northwest Europe // *"Historical Linguistics"* Amsterdam: Benjamins 2001, էջ 157-173: *F. Kortlandt,* Studies in Germanic, Indo-Eoropean and Indo-Uralic, էջ 293-303:

տասանությունը, ինչ vestjysk stød-ը[42]: Վերին գերմաներենի բաղաձայնական տեղաշարժն ունի իր կատարյալ համարժեքը անգլերենի լիվերպուլյան բարբառում, որտեղ հանդիպում են, օրինակ՝ *[kx] can't* ["չի կարող"], , *back* ["հետ, հետն"] բառաձևերում[43]:

Կումելը առարկում է, որ "einfache intervokalische Plosive keine Spuren von Glottalisierung zeigen" [= միջձայնավորային պայթականը ոչ մի կերպ ձայնածերպայնացում ցույց չի տալիս][44]: Սա սխալ կարծիք է, քանի որ մենք իրականում կարող ենք գտնել և՛ նախաշնչեղացում, և՛ նախաձայնածերպայնացում, օրինակ՝ ֆարյորերեն *eta* [e:hta], *opin* [o:hpin], անգլերեն *eating* ["ուտելիք"], *open* ["բաց"], հին հյուս. ումբր. eatta, brecca, հին վերին գերմաներենում կրկնակիացումը ezzan, offan[45]: Կումելը նախաշնչեղացումը և նախաձայնածերպայնացումը համարում է վերջին նորություններից, քանի որ նրանք հանդիպում են նաև փոխառյալ բառերում: Ինչպես Սինդհիի տարնմանման ժամանակ, առարկությունը սխալ է, քանի որ այն միայն ցույց է տալիս, որ փոխառության ժամանակ ուժեղ բաղաձայններն ավելի լավ թեկնածուներ էին օտար խուլ պայթականներն արտահայտելու համար, քան թույլ բաղաձայնները, որոնք օգտագործվում էին օտար ձայնեղ պայթականներն արտահայտելու համար: Կումելը նշում է հնարավորություն նախաշնչեղացման առաջացումը վերագրել Սաամի ազդեցությանը: Սա բացարձակապես հավանական չէ, քանի որ նախ շատ քիչ հարաբերություններ են եղել սկանդինավյան ծովագնացների, ովքեր գաղութացրել են ափերը, և Սաամիի հյուսիսային եղջերուների հովիվների միջև, որոնք թափառում էին երկրի խորքերում: Եվ երկրորդն էլ, քանի որ Սաամի բնակչության շատ փոքր մասն է ապրել Ում գետի հարավում[46]: Եվ երրորդը, որովհետև այդ երևույթը դժվար հասներ այնքան հեռու, ինչպես Իռլանդիա և Շոտլանդիա, առանց լայն տարածում գտած միջամուսնությունների, որի մասին ոչ մի ապացույց չկա:

---

[42] *K. Ringgaard*, Vestjysk stød, Aarhus, Universitetsforlaget, 1960, էջ 199:

[43] *A. Hughes, P. Trudgill*, English accents and dialects: An introduction to social and regional varieties of British English, London: Edward Arnold, 1987, էջ 66:

[44] *M. J. Kümmel*, նշվ. աշխ., էջ 305:

[45] *F. Kortlandt*, Studies in Germanic, էջ 223, 267, 297:

[46] *P. Sammallahti*, The Saami languges: An introduction, Kárášjohka, Davvi Girji, 1998, էջ 6-38:

Այսպիսով, ես եզրակացնում եմ, որ Կումելի վերականգնումը հիմնված է Լուբոտսկու օրենքի մերժման, Սինդհիի ապացույցները հաշվի չառնելու, փենջաբիի, հայերենի, հունարենի, սլավոներենի և բալթյան լեզուների նյութը անտեսելու, նրա՝ Լախմանի օրենքը որպես հնչյունական զարգացում մերժման, նաև գերմաներենի նյութը շրջանցելու վրա: Այն դրսևորում է ուժեղ կողմնակալություն նախահնդեվրոպական ավանդական վերականգման հարցում և հակասում է տիպաբանական նորմալ զարգացումների հերթագայությանը *t > t' > 'd > d > dʰ > tʰ*, ինչպես նաև *t > d >t >tʰ* [47]: Ենթադրյալ *dʰ > d* զարգացումը Կումելը բերում է բոլոր լեզուների համար, բացի հնդկերենից, հունարենից, և իտալերենը ուրիշ ոչ մի տեղ հաստատված չէ: Իմ կարծիքով, նախահնդեվրոպական համակարգը *t:, *t', *t, որը առաջացել է հարավկովկասյան հիմք լեզվի ազդեցության տակ[48], դարձել է *t, *'d, *d , բացի անատոլիականից և թոխարականից, հետո *t, *d, *Þ/d իտալյանում, *t, *d, *tʰ հունարենում, ավելի ուշ *Þ, *'t, *t գերմանական լեզուներում, *tʰ, *t', *d հայերենում, *t, *'d, *dʰ հնդկերենում, *t, *?d, *d բալթիկ-սլավոնականում, և *t, *d իրանականում, ալբաներենում, փռյուգերենում և կելտական լեզուներում:

---

[47] *A.- G. Haudricourt*, նշվ. աշխ., էջ 269:
[48] *F. Kortlandt, նշվ. աշխ., էջ 35-39:*